ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՎԱՉԱԳԱՆ ՎԱՆՑՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՍԽՐԱՆՔԸ

Դեռեւս 1941 թ. հունիսի 21-ի շաբաթ օրը Վրաստանի Ախալքալաքիի շրջանի Զակի գյուղի բնակիչ Վաչագան Վանցյանը պատկերացնել անգամ չէր կարող, որ դա 1941 թվականի վերջին խաղաղ օրն էր: Երեկոյան Ախալքալաքիի քաղաքային զբոսայգում հնչում էր երաժշտություն, երիտասարդները զվարճանում էին: Քաղաքն ապրում էր խաղաղ կյանքով ու, թվում էր, թե չէր կանխատեսում մոտալուտ ողբերգությունը: Բայց դա եղավ: Հունիսի 22-ի առավոտյան ժամը 4-ին ֆաշիստական բանակն առանց պատերազմ հայտարարելու, անսպասելիորեն ռազմական գործողություններ սկսեց Խորհրդային Միության դեմ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Վաչագանը մեկնեց ռազմաճակատ՝ կամավոր, որպեսզի զենքը ձեռքին պաշտպաներ հայրենիքը:

1942 թվականի մայիսից սերժանտի կոչումով նա Կալինինի ռազմաճակատի 41-րդ բանակի 179 հրաձգային դիվիզիայի կազմում աչքի ընկավ Ռժեւա-Ստիչեւսկի մարտական գործողության ժամանակ: Գնդացրային անձնակազմը, որ գլխավորում էր Վանցյանը, ծանր կորուստ պատճառեց թշնամուն: Դա այն ժամանակ էր, երբ խորհրդային զորքերը պաշտպանական հաջող մարտերից հետո սկսեցին հարձակողական գործողություններ:

1944 թվականին, երբ խորհրդային զորքերն անընդմեջ հարվածներով ոչնչացնում էին հիտլերականներին, դարձավ վճռորոշ հաղթանակների տարի: Այն աչքի ընկավ մի շարք խոշոր ճակատամարտերով: Դրանց թվում առաջին տեղերից մեկը զբաղեցնում է Երկրորդ աշխարհամարտի ամենահայտնի մարտական գործողություններից մեկը՝ Բելառուսական գործողությունը: Գերագույն գլխավոր հրամանատարն այդ վիթխարի գործողությունն առաջարկեց կոչել «Բագրատիոն»՝ ի պատիվ վրացական ծագման ռուսական բանակի զորավար, 1812 թվականին Նապոլեոնի դեմ մղած պատերազմի հերոս Պետրե Բագրատիոնու:

Այդ մարտական գործողությունը մշակվել էր գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի կողմից եւ իրականացվեց նրա ղեկավարությամբ: Գործողության իրականացման համար, զորակայանը գործող բանակ էր գործուղել Խորհրդային Միության մարշալներ Գ.Ժուկովին եւ Ա.Վասիլեւսկուն:

Գործողության առաջին փուլը, որը սկսվեց 1944 թվականի հունիսի 23-ին, նախատեսում էր Բելառուսիայի ազատագրումը զավթիչներից: Գործողությունն իրականացնելու էին չորս ռազմաճակատի զորքերը: Հարձակման առաջին իսկ օրը թշնամու պաշտպանությունը ճեղքվեց: Կարճ ժամանակամիջոցում երրորդ բելառուսական ռազմաճակատի (հրամանատար՝ Ի.Չերնյախովսկի) եւ առաջին Մերձբալթյան ռազմաճակատի (Ի.Բաղրամյան) զորքերն ազատագրեցին Վիտեբսկ եւ Օրշա քաղաքները:

Հարձակման առաջին օրը՝ հունիսի 23-ին, իրեն հիանալիորեն դրսեւորեց առաջին Մերձբալթյան ռազմաճակատի 179-րդ հրաձգային Վիտեբսկի դիվիզիայի 259-րդ հրաձգային գնդի սերժանտ Վաչագան Վանցյանի գլխավորած գնդացրային անձնակազմը: Շումիլովա կայարանի մոտ թշնամու ճեղքման ժամանակ ախալքալաքցի զինվորը ոչնչացրեց թշնամու գնդացրային երեք դիրք եւ դրանով նպաստեց խորհրդային հետեւակի հարձակմանը: Շումիլովի արվարձաններում նա ձեռնամարտում ոչնչացրեց մոտ 10 ֆաշիստական զինվոր, գերեց սպային: Երբ ստորաբաժանումը Շումիլովա կայարանի մոտ դուրս եկավ խճուղային ճանապարհ, զավթիչները հակահարձակման փորձ արեցին, թեպետ այդ փորձերը ետ մղվեցին Վանցյանի գնդացրային անձնակազմի կողմից: Գերմանացիները կորցրեցին ավելի քան քսան զինվոր ու սպա: Նշենք, որ այդ ժամանակ Վաչագան Վանցյանն արդեն պարգեւատրվել էր «Արիության համար» մեդալով, որը ռազմաճակատում համարվում էր զինվորական շքանշան:

Հուլիսի սկզբներին Բելառուսիան լրիվ ազատագրվել էր զավթիչներից:

«Բագրատիոն» գործողության երկրորդ փուլի ծրագրով, որն ավարտվելու էր օգոստոսի 29-ին, պետք է ազատագրվեին Լատվիայի որոշակի հատվածը, Լիտվայի մեծ մասը՝ Վիլնյուս մայրաքաղաքով:

Հուլիսի 29-ին երկրորդ գումարտակը Լիտվայում գետանցեց Մեմելը եւ ամրացավ գետի հյուսիսային ափին: Վանցյանի անձնակազմն առաջինն էր, որ դիրք գրավեց այդ վայրում: Գնդացրորդները ետ մղեցին հակառակորդի հարձակումները, ինչը մյուս ստորաբաժանումներին գետանցման հնարավորություն ընձեռեց: Հենց Մեմել գետի ափին 1944 թվականի օգոստոսի 1-ին սերժանտ Վաչագան Վանցյանը կատարեց իր անմահ սխրանքը: Այդ օրը հակառակորդը մի քանի անգամ կրկնվող հարձակումներով փորձում էր ճեղքել պաշտպանությունը, սակայն դրանք ետ էին մղվում: Թեպետ գերմանացիները հնարավոր ամեն ինչ անում էին գետի հյուսիսային ափը խորհրդային զինվորներից խլելու համար: Այդ նպատակով, հակառակորդը գերազանցող ուժերով, տանկերի օգնությամբ, հարձակման անցավ Վանցյանի անձնակազմի կողմից զբաղեցրած դիրքերի ուղղությամբ: Հարձակումներից մեկը ուղեկցվում էր ինը տանկերի աջակցությամբ: Վանցյանը, դիրքերի վրայով բաց թողնելով տանկերը, սկսեց գնդակահարել տանկերին հետեւող հետեւակայիններին, ստիպելով նրանց նահանջել: Իրենց զինվորներին փրկելու համար, տանկերից երկուսը շրջվեցին եւ շարժվեցին Վանցյանի զբաղեցրած դիրքերի կողմը: Եվ երբ տանկերից մեկը թրթուրներով հավասարեցնում է խրամատը, շարժելով գնդացրային անձնակազմի կողմը, ինչպես իր հուշագրում գրել է Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը, Վաչագան Վանցյանը հակատանկային նռնակով ընդառաջ գնաց տանկին՝ գոչելով. «Ետդարձի ճանապարհ չունենք, այստեղ կանգնելու ենք» ու նետվեց տանկի տակ: Մինչեւ վերջին շունչը հերոսը հավատարիմ մնաց իր զինվորի կոչմանը: Վանցյանին հողին հանձնեցին Լիտվայի Ուկմերգի շրջանի Պաշելե (ներկայումս Ուկմարգեի արվարձան) ավանում:

1945 թվականի ապրիլին Վաչագան Հունանի Վանցյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Վաչագան Վանցյանի սխրանքի մասին առաջին անգամ ես տեղեկացա պաշտոնաթող գնդապետ, պատերազմի, աշխատանքի եւ Վրաստանի զինված ուժերի վետերանների Թբիլիսիի քաղաքային խորհրդի նախագահ Մոսե Մդինարաձեից: 1944 թվականին, Լիտվայի տարածքում իրականացված գործողությունների ժամանակ, նա երրորդ Բելառուսական ռազմաճակատի 279-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարն էր: Այն ժամանակ փոխգնդապետ Մոսե Մդինարաձեի ստորաբաժանումն ազատագրում էր Տաուրագե քաղաքը եւ կռիվներում աչքի ընկած զինվորները ներկայացվեցին շքանշանների ու մեդալների: Այդ գործողության համար անձամբ Մդինարաձեն, արժանացավ Ալեքսանդր Նեւսկու անվան շքանշանի:

Այսօր շատ քչերն են մնացել այն հերոսական օրերի մասնակիցներից: Եվ բոլոր նրանք՝ թե՛ զոհվածները եւ թե՛ ներկայումս Հայրենական մեծ պատերազմի ողջ մնացած մասնակիցները, համոզված էին, որ 1941 թվականի դեկտեմբերին Մոսկվայի մերձակայքում սկսված հակահարձակումը վերածվելու էր 1945 թվականի մայիսյան հաղթանակի:

ԲՈՐԻՍ ՇԱՀՆԱԶԱՐՈՎ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 178

ՈՒ ՆՈՐԻՑ ՄԵԾԱՐԵՆՔ ՄԵՐ ԴԱՍԱԿԱՆԻՆ...

Այսօր՝ մայիսի 5-ին, Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում՝ հայ դասական գրող Ղազարոս Աղայանի ծննդավայրում, անցկացվում է ավանդական «Աղայանական օրը»:

Անվանի գրող, մանկագիր, մանկավարժ, գրական-հասարակական գործիչ Ղազարոս Աղայանը (1840-1911թթ.) ինքնակենսագրական ժանրի հիմնադիրն է մեր նոր գրականության մեջ: Նրա պոեզիայում հատուկ տեղ են գրավում «Հիշողություն», «Ճախարակ», «Սերմնացան», «Մանուշակ» բանաստեղծություններն ու «Տորք Անգեղ» պոեմը: Ամենահայտնի արձակ գործերն են «Արություն եւ Մանվել» ու «Երկու քույր» վեպերը: Իսկ հայ հեքիաթագրության պատմության լավագույն էջերից են նրա «Անահիտը», «Ձանգի-զրանգին», «Եղեգնուհին», «Արեգնազան կամ կախարդական աշխարհը»: Աղայանը հարստացրել է մեր թարգմանական գրականությունը ռուս եւ արեւմտաեվրոպական դասականներ Ի.Կռիլովի, Լ.Տոլստոյի, Ֆ.Շիլլերի, Հ.Հայնեի, Վ. Շեքսպիրի ստեղծագործություններով, որոնց շարքում հիշատակության է արժանի Ա.Պուշկինի «Ոսկե ձկնիկ» հեքիաթի փոխադրությունը: Մեծ մտածողն իր ողջ կյանքը նվիրել է մատաղ սերնդի դաստիարակության, ժողովրդին լուսավորելու գործին: Նրա մանկավարժական մոտեցումներն արդիական եւ ուսանելի են նաեւ այսօր: Աղայանի կազմած «Արեւիկ» այբբենարանը շուրջ 40 տարի ծառայել է հայ դպրոցին: Նա առաջնությունը տալիս էր մայրենի լեզվի ուսուցմանը, աշխատանքային, բարոյական եւ գեղագիտական դաստիարակությանը: Գտնում էր, որ աշխատությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության:

19-րդ դարի երկրորդ կես. Բոլնիս-Խաչեն: Այս տանն է ծնվել Ղազարոս Աղայանը

Գրողն իր գեղարվեստական ստեղծագործություններում, հրապարակախոսական հոդվածներում մշտապես առաջ է քաշում ազգապահպանման, հայրենասիրական խնդիրներ: Ահա թե ինչ է ասել նա այդ առիթով. «Ազգային կյանք ասածդ մայրերի ձեռքին է, սերունդ կրթող եւ մեծացնողը նրանք են, նրանք են տան հոգին: Եթե բոլոր մայրերն այնքան ազգասեր եւ հայրենասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատասխանատվություն ձգեն եւ հայրենիքի սեր, այսուհետեւ էլ ինչ մահ կարող է սպառնալ մեզ»:

Տաղանդաշատ հեքիաթագիրն առանձնահատուկ մտերմություն է ունեցել Հովհաննես Թումանյանի հետ: Հովի. Թումանյանը մեծ հարգանքով էր վերաբերվում Աղայանին եւ հաճախ խորհրդակցում նրա հետ: Ահա հետաքրքիր մի դեպք նրանց կյանքից. «1900-ական թվականների սկզբներին սրվել էին հայ-թուրքական հարաբերությունները: Թումանյանը, իր հետ վերցնելով ամենամտերիմ ընկերոջը՝ Ղազարոս Աղայանին, գնում է Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառ՝ բանակցությունների: Կողմերից ոչ մեկը չի ուզում զիջել: Թուրքերից մեկն առաջարկում է. «Թող ձեզնից մեկը կոխ բռնի մեր փահլեւանի հետ: Թե դուք հաղթեք՝ ձեր ուզածով լինի, թե մենք՝ մեր ուզածով»: Խեղճ Թումանյանը, որ մի նրբիրան մարդ էր, անհանգստանում է: Բայց անմիջապես տեղից կանգնում է հաղթահասակ Աղայանը եւ թավ մորուքն սպառնագին առաջ ցցելով ասում. «Բերեք ձեր փահլեւանին»: Եվ Ղազարոսը կայծակնային արագությամբ հաղթում է իր մրցակցին՝ նրա թիկունքը գետնով տալով...

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ղազարոս Աղայանի՝ մանուկների համար գրած պմանրապատումներից երկուսը.

ԱՔԼՈՐԻ ՀՐԱՎԵՐԸ

Աքլորը հարեւանի հավին հրավիրում է կուտի. ասում է.

- Հավիկ-մավիկ, արի կուտ տամ, կե՛ր:

Հավիկը չի ընդունում աքլորի հրավերը:

- Կուտ ունես, քո հավերին կտաս,- ասում է ու կչկչում:

- Լավ,- ասում է աքլորը:- Դու հիմա կտեսնես, ինչքան կուտ ունեմ ես:

Էս ասում է ու կանչում իր հավերին.

- Կու՜ կու՜ռի՜կու...Կու՜տ, կո՜ւտ, կու՜տ...

Կուտի անունը որ լսում են հավերը, հավաքվում են շուտ եւ ուտում կուտը, իսկ հարեւանի հավին դուրս են անում. նրան կուտ չեն տալիս:

ԱՇԽԱՏԱՍԵՐ ՇՈՒՆԸ

Շունը պահպանում էր իր տիրոջ տունը: Նա տեսավ մի մուրացկան բակում կանգնած, սկսեց վրան հաչել:

- Սիրելի,- ասաց աղքատը,- բարի եղիր եւ խղճա ինձ, ահա երկու օր է ոչինչ չեմ կերել:

- Ես էլ նրա համար եմ հաչում, որ տանեցիք լսեն ձայնս եւ քեզ բաժին բերեն,- ասաց շունը:

- Եթե այդպես է, խնդրեմ բերանդ դեպի տունը դարձնես եւ այնպես հաչես,- ասաց աղքատը, որ տնապահ շան աղքատասիրությանը չէր հավատում:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԾԽԵԼՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ԵՎՍ ՄԵԿԸ

«Սպաժավոր» ծխող եմ: Լսողության հետ կապված խնդիրներ ունեմ: Բժիշկներն ասային, որ դա կարող է ծխելու հետեւանք լինել: Թեպետ չեմ կարող հասկանալ՝ ի՞նչ կապ ունի ծխելը լսողության հետ:

Վ.Մինասյան

Բաթումի

Ողքան էլ տարօրինակ լինի, ծխելու եւ լսողության միջեւ անմիջական կապ գոյություն ունի: Ծխելը, հատկապես շատ ծխելը, կարող է հանգեցնել լսողության հետ կապված խնդիրների: Ինչպես հայտնել է «Asahi» թերթը, այս եզրակացությանն են հանգել Առողջության համաշխարհային պահպանության եւ բժշկության ազգային կենտրոնի մի խումբ ճապոնացի մասնագետներ: Նրանց կողմից կատարված ուսումնասիրությանը մասնակցել է ավելի քան 50 հազար մարդ՝ ճապոնիայի մայրաքաղաքային տարածաշրջանի խոշոր կորպորացիաների 20-ից մինչեւ 64 տարեկան աշխատակիցներ:

Նրանք տրամադրել են 2008-2010 թթ. ընկած ժամանակաշրջանում բուժզննումների տվյալները, ինչպես նաեւ տեղեկատվություն այն մասին՝ ծխո՞ւմ են, արդյոք, թե՞ վտանգավոր սովորությունից հրաժարվել են հայտարարված ժամանակահատվածում եւ այլն: Դրանից հետո գիտափորձի մասնակիցները կանոնավոր կերպով բժիշկների մոտ հետազոտվել են ընդհուպ մինչեւ 2016 թվականի վերջը, եւ այդ տեղեկատվությունը նույնպես ստացվել է հետազոտական կենտրոնում: Դիտարկումների ողջ ժամանակաշրջանում ավելի քան 5 հազար մարդկանց մոտ հայտնաբերվել է լսողության տարբեր աստիճանի մասնակի կորուստ: Համադրելով ստացված արդյունքները, որոնք կապված են այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են տարիքը եւ քրոնիկական հիվանդությունները, գիտնականները եկել են այն եզրակացության, որ օրական մինչեւ 10 գլանակ ծխելը խլության զարգացման շանսերը մեծացնում է 1,4 անգամ, իսկ եթե այդ չափն ավելացվի մինչեւ մեկ տուփ եւ ավելի, ապա այդ ցուցանիշը կմեծանա մինչեւ 1,7 անգամ:

Ճապոնացի մասնագետները գտնում են, որ դա կապված է նիկոտինի թունավոր լինելու եւ ծխելիս արյան հոսքի խախտման հետ, ինչը բացասաբար է ազդում ներքին ականջի վրա: Համանման ազդեցություն է ունենում նաեւ վերջին ժամանակներս տարածում ստացած էլեկտրոնային գլանակների գործածումը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿՃԱԽՏԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԴՅՈՒՐԻՆ ՄԻՋՈՑԸ

Կանադայի Տորոնտոյի համալսարանին կից, Թմրաբանության եւ հոգեկան առողջության կենտրոնի գիտնականները պարզել են, որ երկարատեւ ընկճախտը (депрессия) կարող է փոփոխությունների հանգեցնել ուղեղում: Հետազոտության արդյունքները հրապարակված են «The Lancet Psychiatry» հանդեսում:

Հետազոտությանը մասնակցել է 25 մարդ, որ երկարատեւ ընկճախտով տառապել է ավելի քան 10 տարի, 25 մարդ՝ միջին տեւողության ընկճախտով, եւ 30-ը՝ լիովին առողջ մարդ: Նրանց մոտ, ովքեր վաղուց են տառապում ընկճախտից, ուղեղում գտել են տրանսլոկատորային սպիտակուցի 30 տոկոսով ավելի բարձր մակարդակ, որոնք ստեղծում են իմունային բջիջները:

Ինչպես պարզվել է նախորդ հետազոտությունների ընթացքում, ուղեղը նման կերպ հակազդում է նեյրոդեգեներատիվ հիվանդություններին, ինչպիսին Ալցհայմերի կամ Պարկինսոնի հիվանդությունն է, սակայն դեպրեսիան, որը դրանց թվին չի դասվում, դատելով ըստ նոր արդյունքների, կարող է որոշ առումներով նման արդյունք ունենալ:

Ամերիկացի գիտնականները գտել են ընկճախտը հաղթահարելու դյուրին միջոց: Այդ մասին, գրել է EurekAlert պորտալը: Մասնագետները պարզել են, որ կերակրի մեջ թարմ մրգերի, բանջարեղենի եւ հատիկավոր մթերքների օգտագործումը, նվազեցնում է հոգեկան խանգարումների վտանգը:

Նրանք այս եզրակացությանն

են եկել՝ տարեցների նկատմամբ դիտարկման վեցամյա գիտափորձ անցկացնելուց հետո: Մասնակիցները երեք հիմնական խմբի էին բաժանված՝ ըստ DASH (Դիետիկ մոտեցումը հիպերտոնիայի դադարեցման նկատմամբ) սննդակարգին, միջերկրածովյան եւ ավանդական սննդակարգերին՝ նրանց սնվելու համապատասխանության մակարդակի: Ինչպես ցույց են տվել դիտարկումների արդյունքները, ընկճախտի առաջացման վտանգը փոքր է եղել այն խմբի ներկայացուցչիների մոտ, ովքեր առավելապես սնվել են այնպիսի մթերքներով, որոնք DASH սննդակարգի (մրգեր, բանջարեղեն եւ անյուղ մթերքներ) մաս են կազմում:

Ընկճախտի առաջացման ամենաբարձր ցուցանիշը այն մասնակիցների մոտ է, որոնց սնունդն ավելի շատ համապատասխանել է կարմիր մսի բարձր պարունակությամբ արեւմտյան սննդակարգին: Հետազոտողների խոսքով, իրենց աշխատությունը չի ապացուցում, որ DASH սննդակարգը հանգեցնում է հոգեկան խանգարումների վտանգի նվազեցման, այլ միայն ցուցադրում է՝ որոշակի փոխադարձ կապը: Ավելի վաղ գիտնականները պարզել են, որ շաբաթվա ընթացքում ընդամենը մեկ ժամ լիցքային վարժություններ կատարելը նույնպես զգալիորեն նվազեցնում են ընկճախտի զարգացման հավանականությունը:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱՇԽԱՐՀ

«ԵՍ ԳԻՏԵՄ, ՈՐ ՈՉԻՆՉ ՉԳԻՏԵՄ»

Հնում մարդիկ երազներին շատ լուրջ էին վերաբերում: Օրինակ, Հռոմեական կայսրությունում երազը նույնիսկ կարող էր Սենատում ներկայացվել պետական այրերին, որպեսզի նրանք այն վերլուծեին եւ ճիշտ եզրահանգումներ անեին: Ռազմական արշաիավանքների ժամանակ, երազներ մեկնաբանող խորհրդականներն ուղեկցում էին զորավարներին: Շատ դեպքեր են հայտնի նաեւ այն մասին, որ բազմաթիվ հանճարների եւ գիտնականների լավագույն գաղափարներն ու հայտնագործությունները հենց երազում են հայտնվել: Այդ օրինակներից են Մենդելեեւի կողմից հայտնաբերված քիմիական տարրերի աղյուսակը եւ Մաշտոցի ստեղծած հայոց այբուբենը:

Այս ամենը ո՛չ կարելի է հերքել, ո՛չ էլ ապացուցել: Բայց մի բան հաստատ է, աշխարհը լի է չբացահայտված գաղտնիքներով: Այնպես որ, մ.թ.ա. 5-րդ դարում ապրած Սոկրատեսի փիլիսոփայական միտքն արդիական է նաեւ այսօր եւ արդիական կլինի ընդմիշտ՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԱՇԽԱՐՀԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ 60 ՏՈԿՈՍԸ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏՈԿՈՍԻ ՄՈՏ

2030 թվականին համաշխարհային բարեկեցության մոտավորապես երկու երրորդը կվերահսկվի բնակչության 1 տոկոսի կողմից: Այդ մասին, ինչպես տեղեկացնում ունենք, վկայում է Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի գրադարանի կանխատեսումը:

Այս տվյալները նախազգուշացնում են աշխարհի ղեկավարների համար առ այն, որ բնակչության ամենաուներեւոր մասի կողմից հարստությունների շարունակվող կուտակումը կնպաստի հասարակության մեջ անվստահության եւ դժգոհության աճին, եթե իշխանությունները միջոցներ չձեռնարկեն հաշվեկշիռը փոխելու համար, գրում է «The Guardian» թերթը: Հրապարակված գնահատումների համաձայն, այն թրենդների պահպանման դեպքում, որոնք դիտվում են 2008թ. ֆինանսական ճգնաժամի ժամանակներից, ամենահարուստ մարդիկ, որոնք կազմում են բնակչության 1 տոկոսը, կտիրեն համաշխարհային հարստությունների 64 տոկոսին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, 2008 թվականից մոլորակի 1 տոկոս կազմող ամենահարուստ մարդկանց կարողության աճի միջին տեմպերը հասնում են տարեկան 6, իսկ բնակչության մնացած 99 տոկոսինը՝ ընդամենը 3 տոկոսի: Համայնքների պալատի գրադարանում կանխատեսում են, որ այդ թրենդի պահպանման դեպքում, 2030 թվականին աշխարհի ամենահարուստ մարդկանց կարողությունը ներկայիս 140 տրլն դոլարից կաճի մինչեւ 605 տրլն դոլար:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մայրը միշտ մայր է, որդիք են տարբեր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)
Հայ գրող, բանաստեղծ

Գիտությունը ամեն բանի համ է տալիս՝ աղ է ասես:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Նստակյաց մտավոր աշխատանքը, առանց շարժումների եւ ֆիզիկական աշխատանքի, ինքնին դժբախտություն է:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ
(1828-1910)
Ռուս գրող

Փոքր տրտմությունները խոսքաշատ են, խոր վիշտը մունջ է:

ԱՐԻՍՏՈՖԱՆԵՍ
(մ.թ.ա. 446-386)
Հին հունական կատակերգակ

Ինքնախաբեություններից ամենավտանգավորը, գուցե, հենց սեփական ունակությունների ապացուցումն է:

ՖՐԵԴԵՐԻԿ ՊԵՐԼԶ
(1893-1970)
Գերմանացի գեշտալտ թերապիայի հիմնադիր

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Ընտանեկան ժողովում մայրն ասում է.

- Որդի՛ս: Հաջորդ շաբաթվանից մենք նոր կյանք ենք սկսում: Ես թողնում եմ ծխելը, հայրիկդ՝ խմելը: Իսկ դո՞ւ...

- Ես էլ կարող եմ թողնել դպրոցը:

☺ Ամուսինը գալիս է տուն, տեսնում՝ կինը տխուր-տրտում նստած է.

- Ի՞նչ է եղել:

- Քեզ համար կոտլետ էի սարքել, կատուն սաղ կերավ:

- Բան չկա, սիրելի՛ս, ուրիշ կատու կգտնեմ քեզ համար:

☺ - Սիրելի՛ս, դու հանդիպեցի՞ր այն տղամարդուն, որն ինձ փրկեց խեղդվելուց:

- Այո՛, նա ինքը եկավ ինձնից ներողություն խնդրելու...

☺ Խորտկարանում տխուր նստած է մի տղամարդ, որը պատվիրում է բաժակ-բաժակի հետեւից: Վերջապես մատուցողը չի դիմանում եւ հարցնում է.

- Ի՞նչ է պատահել:

- Է՜, կնկաս հետ եմ կռվել: Նա խոստացել է մեկ ամիս հետս չխոսել:

- Հա՜՞... Պատկերացնում եմ, թե ինչ վատ եք զգում ձեզ:

- Էլ մի ասա: Էսօր վերջին օրն է...

☺ Մի մարդ պատմում է ընկերոջը:

- Մի անգամ տուն եմ գալիս, կինս ուզում է հաց դնի, «Սոված չեմ»,- ասում եմ, ինքն էլ թե «հաաաաաա՜, սիրուհիդ է" կերակրել»: Մյուս օրը դիտավորյալ քաղցած եմ գալիս տուն, ասում է՝ «էդ կռվե՞լ եք»:

☺ Գործուղումից վերադարձած ամուսինը խոստովանում է կնոջը, որ կորցրել է ամուսնական մատանին:

- Չեմ հասկանում,- զայրանում է կինը,- ինչպե՞ս կարող է կորցնել ամուսնական մատանին:

- Դու ես մեղավոր: Քեզ արդեն մեկ տարի է՝ ասում եմ, որ գրպանս ծակվել է:

ԵՐԵՎԱՆ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ ՏԱՊԱԼՎԵՑ

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱԺ ՆԻՍՏՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԻԱԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆՈՐԻՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ռուսաստանին համարել եւ համարում եմ ռազմավարական դաշնակից, իսկ համաժողովրդական շարժումը հայ-ռուսական հարաբերությունների համար որեւէ սպառնալիք չի ներկայացնում:

Մենք հատուկ կարեւորություն ենք տալիս Հայաստան-Իրան եւ Հայաստան-Վրաստան հարաբերություններին: Որեւէ կասկած չկա, որ քաղաքական այս գործընթացը նոր շունչ ու էներգիա է տալու մեր հարեւանների հետ հարաբերություններին: Մենք խորացնելու ենք հարաբերությունները Եվրոպական Միության եւ այդ կառույցի անդամ երկրների հետ: Մենք ամեն ինչ անելու ենք Հայաստանի քաղաքացիների համար Եվրամիության մուտքի արտոնագրի պահանջի վերացման ուղղությամբ: Ակնկալում ենք դրա շուրջ բանակցություններն սկսել ամենամոտ ապագայում,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Փաշինյանն անդրադարձավ նաեւ ԱՄՆ-ի հետ հարաբերություններին՝ շեշտելով, որ այդ երկրի հետ բարեկամական հարաբերությունները նոր խթանման կարիք ունեն:

- Մենք նպատակադրված ենք հստակ եւ գործնական քայլեր ձեռնարկել ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում փոխգործակցությանը զարկ տալու համար:

Նիկոլ Փաշինյանը շեշտեց՝ հավատարիմ եմ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացին, քանզի համոզված եմ, որ միայն դատապարտման միջոցով է հնարավոր կանխել նման ոճիրների կրկնությունը:

Նրա գնահատմամբ, ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ, միջազգային իրավունքի վրա հիմնված կարգավորման գործընթացում կարծրատիպերն իրենց համար պարտադիր չեն, կենսական է Արցախի ժողովրդի՝ իր ճակատագիրը ինքնուրույն որոշելու անքակտելի իրավունքի եւ դրա իրացման միջազգային ճանաչումը:

45 ԿՈՂՄ՝ 56 ԴԵՄ. ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵՑ

Մայիսի 1-ին Հայաստանի Ազգային ժողովը գրեթե ութ ժամ տեւած քննարկումից հետո՝ 45 կողմ, 56 դեմ ձայներով, մերժեց Հայաստանի վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը: Թեկնածությունը ներկայացրել էր «Ելք» խմբակցության անդամ Արարատ Միրզոյանը:

Վարչապետի պաշտոնում առաջադրված միակ թեկնածու, «Իմ քայլը» շարժման առաջնորդ, ընդդիմադիր, «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը չստացավ բավարար թվով 53 ձայն:

Իշխող՝ «Հանրապետական» խմբակցությունից ընդամենը մեկ պատգամավոր կողմ քվեարկեց Նիկոլ Փաշինյանին՝ Շիրակի նախկին մարզպետ, անկուսակցական Ֆելիքս Ցոլակյանը:

«Հանրապետական» խմբակցությունից մեկ այլ պատգամավոր՝ Գրիգոր Ավալյանը, բացակա էր: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ համաժողովրդական շարժմանը միանալու հայտարարությամբ հանդես եկած Ավալյանը հրաժարականի դիմում էր ներկայացրել Աժ նախագահին:

«Ծառուկյան» դաշինքը եւ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունն ավելի վաղ հայտարարել էին, որ սատարելու են Հայաստանի վարչապետի «Ելք» խմբակցության թեկնածուին: 105 պատգամավոր ունեցող խորհրդարանում «Ելք», «Ծառուկյան» եւ ՀՅԴ խմբակցությունները միասին ունեն 47 ձայն (ՀՅԴ-ական Աղվան Վարդանյանը հայտարարեց չքվեարկելու մասին: Նիստի ավարտից հետո, նա վայր դրեց պատգամավորական մանդատը):

ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՋՈՐԴԵՑ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԿՑԻԱՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԿՈՉԸ

Մայիսի 1-ին, Հայաստանի Ազգային ժողովում վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը չհաստատելուց հետո, Ազգային ժողովի մոտ 12 ժամ տեւող ընթացքը դիտող մայրաքաղաքի հրապարակում հավաքված հազարավոր ցուցարարներին Ն.Փաշինյանը կոչ արեց հաջորդ առավոտից վերսկսել քաղաքացիական անհնազանդության ակցիաները:

- «Հանրապետական» խմբակցության գործողությանը մեր հակագործողությունը լինելու է շատ արագ, մայիսի 2-ին հայտարարվում է տոտալ գործադուլ եւ դասադուլ: Առավոտյան 8:15-ից շրջափակում ենք բոլոր փողոցները, հաղորդակցության ուղիները, մետրոն, օդանավակայանը: Մեր պայքարը չի կարող չպսակվել հաղթանակով,- դիմելով ցուցարարներին՝ ասաց Նիկոլ Փաշինյանը:

ՆՈՐ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ Ն. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

2018 թ. մայիսի 2, Երեւան. Նիկոլ Փաշինյանը հարցազրույց է տալիս լրագրողներին:

Հայաստանի Աժ-ի «Ելք», «Ծառուկյան» եւ ՀՅԴ խմբակցությունները հավաքում են Հայաստանի վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի թեկնածությունն առաջադրելու համար անհրաժեշտ 35 ստորագրությունը:

«ԱՎԱՐՏԻՆ ԵՆ ՀԱՍՑՎՈՒՄ ԵՐԿՐՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ»

Մայիսի 3-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն ուղերձ է հղել: Ուղերձում, մասնավորապես, ասված է.

«Հանրապետությունում առկա քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով երեկվա ընթացքում տարբեր մակարդակներով հագեցած քննարկումներից հետո, ներգրավված քաղաքական ուժերը հանդես եկան հայտարարություններով, որի համաձայն, տրամաբանական ավարտին են հասցվում երկրում ծավալված ժողովրդավարական զարգացումները:

Այս կապակցությամբ, ողջունում եմ Նիկոլ Փաշինյանի գլխավորած համաժողովրդական շարժման, «Հայաստանի Հանրապետական կուսակցության», «Բարգավաճ Հայաստան»-ի, «Ելք» դաշինքի ու ՀՅԴ պատասխանատու կեցվածքը, որը բխում է Հայաստանի եւ մեր ժողովրդի գերակա շահերից ու դուռ բացում դեպի ազգային համերաշխության:

Սրանով մեր ժողովուրդը կրկին անգամ ցույց տվեց, որ ճակատագրական պահին ունակ է համախմբվել եւ ազգապաստ որոշումներ կայացնել:

Այս օրերին Հայաստանը համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում է: Մենք անցնում ենք փորձությունների միջով, եւ վստահ եմ, որ մայիսի 8-ին կամրագրվեն հանուն բարեփոխումների համազգային շարժման ձեռքբերումները, որի մեջ իրենց մասն ունեն բոլորը՝ քաղաքական ուժերից սկսած մինչեւ մեր ժողովրդի բոլոր հատվածները Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում»:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 3-ին Հայաստանի վարչապետի թեկնածու, Ազգային Ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Հայաստանում մի շարք դեսպանների հետ: Մասնավորապես, նա հանդիպել է Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինի, ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի, Եվրամիության դեսպան Պյոտր Սվիտալսկու, Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեի հետ:

- Դեսպաններին տեղյակ պահեցի ներքաղաքական ճգնաժամի հանգուցալուծման վերաբերյալ ձեռքբերված պայմանավորվածությունների մասին: Նաեւ քննարկեցինք հարաբերությունների օրակարգին վերաբերող այլ հարցեր: Հայաստանում հավատարմագրված դիվանագետների հետ հանդիպումները կշարունակվեն,- նշել է Փաշինյանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՆՈՐԻՑ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

Մայիսի 3-ին Հայաստանի Ազգային ժողովում վարչապետի թեկնածու է առաջադրվել Նիկոլ Փաշինյանը: Թեկնածությունն առաջադրվել է ՀՀ Աժ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից:

Հիշեցնենք, որ մայիսի 1-ի հատուկ նիստում ՀՀ Ազգային ժողովը վարչապետ չընտրեց, իսկ «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն, վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո, անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ

Հայաստանի վարչապետի ընտրության երկրորդ փուլը կկայանա մայիսի 8-ին, ժամը 12:00-ին, Ազգային ժողովի հատուկ նիստում: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը:

Նշենք, որ Հայաստանի սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, առաջին փուլում վարչապետ չընտրվելու դեպքում, քվեարկությունից յոթ օր հետո, անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները (35 պատգամավոր): Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (53 ձայն) վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն լուծարվում է իրավունքի ուժով:

ԵԱՀԿ ՆԱԽԱԳԱՀ ԳԻՈՐԳԻ ՇԵՐԵԹԵԼԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտարարեց Խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գիորգի Ծերեթելին ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը հետեւում է Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին եւ ողջունում քաղաքական ուժերի միջեւ ակտիվ երկխոսությունը.

- Հուսով եմ, որ ներկայիս փակուղին կհաղթահարվի արագ քաղաքական համաձայնության միջոցով, որպեսզի կառավարությունը կարողանա կենտրոնանալ Հայաստանի առջեւ ծառացած շատ մարտահրավերների վրա: Հորդորում եմ քաղաքական առաջնորդներին՝ շարունակել ներգրավվածությունը խորհրդարանական երկխոսությանը, ինչպես նաեւ աշխատել քաղաքացիական հասարակության ու միջազգային հանրության հետ՝ փնտրելու գոհացուցիչ արդյունք, որը պետք է դիտարկվի երկրի քաղաքական մշակույթի զարգացման ավելի լայն գործընթացի շրջանակում:

ԵԱՀԿ ԽՎ նախագահը մայիսի 3-ին հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի եւ ԵԱՀԿ ԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար Հերմինե Նաղդալյանի հետ:

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԿՁԵՎԱՎՈՐՎԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ

Կովկասի ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանը մայիսի 8-ին «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելու հավանական սցենարի դեպքում ամենակարեւոր խնդիրը համարում է խորհրդարանում «Ելք» խմբակցության փոքրամասնություն կազմելը: Նրա խոսքով, Փաշինյանի՝ վարչապետ ընտրվելուց հետո, կփոխվի նաեւ քաղաքական էլիտան:

- Միգուցե հետ վերադառնան հին նախարարներ, քաղաքական տարբեր գործիչներ: Քաղաքական էլիտան միանշանակ բազմաշերտ է լինելու,- ասել է նա:

Քաղաքագետի խոսքով, Փաշինյանն ընտրվելուց հետո պետք է Ընտրական օրենսգրքի փոփոխություններ իրականացնի, իսկ դրա համար անհրաժեշտ է ներկայիս խորհրդարանին փոփոխություններն ընդունելու համար համոզելու ճանապարհներ գտնել:

- Ամեն դեպքում, ամեն ինչ պետք է արագ արվի, քանի դեռ հանրության օժանդակությունը չի մարել,- ասել է քաղաքագետը:

Ալեքսանդր Իսկանդարյանը ոչ հավանական համարեց երկրի ղեկավարի փոփոխությամբ պայմանավորված արցախյան հիմնահարցում տեղաշարժի հավանականությունը:

- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններ վաղուց չեն իրականացվում, իսկ այն, ինչ հիմա իրականացվում է, չի կարելի բանակցություն համարել,- հավելել է բանախոսը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ

10.05.2018. Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, ապրիլի 30-ից հունիսի 3-ը՝ հինգշաբթի:

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաեւ ժողովրդական հանդիսություններով եւ կոչվում է Ձանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ):

ԸՄԲՇԱՄԱՐՏ

ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռուսաստանի Կասպիյսկ քաղաքում եզրագիծը հատեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը:

Մրցաշարում վրաց ըմբիշները իրենց ակտիվում գրանցեցին մեկական ոսկե, արծաթե եւ չորս բրոնզե մեդալներ: Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեց Ռոբերտ Կոբլիաշվիլին, արծաթե մեդալակիր դարձավ Շմագի Բոլքվաձեն: Մրցանակային երրորդ տեղը զբաղեցրին Յուրի Լոմաձեն, Նուգզար Ցուրծումիան, Իակոբ Քաջաիան, Դավիթ Չխարտիշվիլին:

Մրցաշարում հաջող հանդես եկան Հայաստանի մարզիկները: Օլիմպիական խաղերի, աշխարհի չեմպիոն (2016թ.), աշխարհի եռակի (2014, 2015, 2017), Եվրոպայի եռակի (2012, 2013, 2014) չեմպիոն Արթուր Ալեքսանյանը 4-րդ անգամ դարձավ Եվրոպայի չեմպիոն: Մրցաշարում առաջին անգամ մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեց Մաքսիմ Մանուկյանը:

Թիմային հաշվարկում, առաջին տեղը զբաղեցրեց Ռուսաստանի, երկրորդը՝ Հայաստանի, երրորդը՝ Ադրբեջանի, իսկ չորրորդը՝ Վրաստանի թիմերը:

ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿԴ, ՍԻՐԵԼԻ ԽԱԺԱԿ



Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան, բազմավաստակ մանկավարժ, վիրահայ ճանաչված արձակագիր, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ, մեր թերթի բարեկամ Խաժակ Եփրիկյանը դարձավ 100 տարեկան:

«Վրաստան»-ի աշխատակազմը իր եւ թերթի ընթերցողների անունից ջերմորեն շնորհավորում է քեզ այդ պատկառելի ու ամեն մարդու համար երազելի հոբելյանի առթիվ՝ ցանկանալով քաջառողջություն ու դարձյալ քաջառողջություն:

Ջերմ մաղթանքներով՝ «Վրաստան» թերթի խմբագրություն

ՀԻՇԱՏԱԿ

ԶԵԶՎԱ ՄԵԴՈՒԼԱՇՎԻԼԻ

Վրաց ժամանակակից գրականությունը ծանր կորուստ կրեց: Կյանքի 79-րդ տարում վախճանվեց վրաց ճանաչված գրող եւ հասարակական գործիչ, թարգմանիչ Զեզվա Մեդուլաշվիլին, մարդ, որը վերջին գրեթե վեց տասնյակ տարիների ընթացքում հայերենից վրացերենի իր բարձորակ թարգմանություններով ուրախացնում էր վրաց ընթերցողին:

Իր ծննդավայր Կախեթիի Արաշենդա գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, Զեզվա Մեդուլաշվիլին ուսումը շարունակել է Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժնում: Բուհն ավարտելուց հետո, նա աշխատանքի է անցել վերոնշյալ ֆակուլտետի հայագիտության ամբիոնում, եղել է լաբորանտ, դասախոսություններ է վարել «Հայագիտություն» առարկայից: 1974 թվականից Վրաստանի գրողների միության լիարժեք անդամ էր:

Գրիգոր Նարեկացի, Սայաթ-Նովա, Գաբրիել Սունդուկյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Խաչատուր Աբովյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Պերճ Զեյթունցյան, Հրանտ Մաթեւոսյան, Ռազմիկ Դավոյան՝ ահա այն գրողների ոչ լրիվ ցուցակը, որոնց գործերը Զեզվա Մեդուլաշվիլու ջանքերով դրվել են վրաց ընթերցողի սեղանին:

Առանձնակի մեծ է Զեզվա Մեդուլաշվիլու ավանդը սայաթնովագիտության զարգացման գործում: Նրա ջանքերով վերջին տարիներին հրատարակվեց երկհատոր՝ նվիրված Սայաթ-Նովայի եռալեզու ստեղծագործություններին: Զեզվա Մեդուլաշվիլու գործունեությունը արժանվույնս գնահատվել էր՝ նրան շնորհվել են Վրաստիանի գրողների միության «Վրաստանի մշակույթի դեսպան» մեդալ եւ Իվանե Մաչաբելու մրցանակ, ինչպես նաեւ Հայաստանի գրողների միության Եղիշե Չարենցի անվան գրական մրցանակ:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտացած են Զեզվա Մեդուլաշվիլու մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին:

ՍՈՆԻԿ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

Կյանքի 65-րդ տարում հանկարծամահ եղավ Սոնիկ Նահատակյանը: Նա ծնվել էր Ախալքալաքիի շրջանի Դիլիսկա գյուղում, Հակոբ Նահատակյանի ընտանիքում:

1969-1970 ուստարում ավարտելով Դիլիսկայի միջնակարգ դպրոցը՝ սովորում եւ ավարտում է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ապա՝ ամուսնացել դամալացի Միսակ Թորոյանի հետ, ով երկար տարիներ Դամալայի հանրային դպրոցի տնօրենն էր:

36 տարվա հմատեղ կյանքի ընթացքում ունեցել են երեք երեխա՝ Կարինեն, Ժիրայրը եւ Սիրանուշը, որոնց կրթել ու դաստիարակել են՝ որպես լիարժեք քաղաքացիներ:

Ամուսնու մահից հետո, Սոնիկ Նահատակյանը շարունակեց աշխատել Դամալայի դպրոցում:

Զավակներին եւս մեկ ծանր հարված էր սպասվում. 2018 թվականի ապրիլի 28-ին, երբ մայրը շրջանավարտնեերին նախապատրաստում էր «Վերջին զանգին», հանկարծ վատ զգաց, տուն եկավ ու... մահացավ:

Սոնյայի կյանքի 42-ամյա ճանապարհը կապված է եղել դպրոցի, աշակերտների հետ: Իր մանկավարժական, մասնագիտական կարողություններն ու գիտելիքները նվիրել է աշակերտներին կրթելու եւ դաստիարակելու վեհ գործին:

Սգում է ողջ Դամալան... կորցրել է մի համեստ, աշխատասեր, բարի, արժանապատիվ կնոջ, նվիրված մոր, տատիկի, նրան սիրում ու հարգում էին բոլորը:

Գնա՜ս բարով, հարգարժան Սոնյա, քո հիշատակը հավերժ վառ կմնա բոլորիս սրտերում...

Դամալայի հանրային դպրոցի տնօրինություն, մանկավարժական կազմ, հոգաբարձուների խորհուրդ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ռուս հայտնի նկարիչ: 5.Հանրահայտ երգիչ, երգահան, կիթառահար Քրիստ ...: 10.Սերգեյ Փարաջանովի ֆիլմերից՝ «...ի բերդի ավերակները»: 11.Չհասած, չզարգացած, խակ: 12.Կարեն Դեմիրճյանի կինը: 13.Օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 14.Հայերենի վերջածանց: 16.Ա.Պուշկինի դայակը: 17.Քենիայի մայրաքաղաքը: 18.Քրոջ որդին քեռու համար: 19.Պայմանի շաղկապ: 20.Իտալացի հայտնի դերասանուհի ... Լոլոբրիջիդա: 23.Հերոսուհի Լեւոն Շանթի «Հին աստվածներ»-ում: 24.Փորված ճանապարհ լեռներում: 26.«Ես ... եմ գործում, դու ընտիր գործեր» (Ջիվանի): 28.Պորտուգալիայի քաղաքամայրը: 29.Ցլած հատիկ: 31.Վրաց անվանի դերասանուհի ... Վաչնաձե: 33.Հայոց դիցուհի: 34.Շամիրամի ոստանը: 37.Ոչ ճիշտ, ապատեղեկատվություն: 39.Փոթորկվել, ալեբախվել: 42.Համեմունքի տեսակ: 46.Գիքորի մայրը: 48.Հայ ֆիդայի՝ Սեբաստացի ...:50.Ռաֆֆու պատմավեպի հերոսուհի: 51.Թբիլիսցի լրագրողուհի ... Իսրայելյան: 52.Լեռ Փարվանա լճի մոտ: 53.Գաբրիել Սունդուկյանի գրական հերոս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.«Մայր թատրոնի մեծ տիկին». այսպես են մեծարել այս դերասանուհուն: 2.Հովի. Թումանյանի հեքիաթի հերոսուհի: 3.Մարգարե: 4.Հանրահայտ երգչուհի ... Զաքարյան: 5.Լեզվաբան, հայագետ, ակադեմիկոս: 6.Հորեղբայրը՝ Լոռիում: 7.Նրա անունն է կրում Թբիլիսիի հայկական թատրոնը: 8.Մյանմայի քաղաքամայրը: 9.Երգիչ Իսպիրյաններից ավագ եղբայրը: 15.Քաղաք Հնդկաստանում: 17.Նիրհել, մրափել: 19.Վշտոտ, տրտում: 21.Վրաց հայտնի գրող, հասարակական գործիչ ... Ճավճավաձե: 22.Լեռ Հայաստանում: 24.Թիկն տալ: 25.Հերոսուհի «Կտոր մը երկինք» ֆիլմում: 27.Յոթերորդ նոտան: 29.Հայերենի վերջածանց: 30.Գրիգոր Լուսավորչի հայրը: 32.Փոքրիկ գետակ բանջարանոցում: 35.Քաղաք Ռուսաստանի հարավում: 36.Հավի տեսակ: 37.Պետություն Աֆրիկայում: 38.«... սոխակ» են անվանել Արմենակ Շահմուրադյանին: 40.«... այս գիշեր արթուն մնանք մինչեւ լույս» (Ժող. երգից): 41.Ֆրանսիացի հանրահայտ գրող: 43.«Ես ... Մասիս սարն եմ սիրում» (Եղիշե Չարենց): 44.Շատ փափուկ, նրբագեղ: 45.Գյուղական տրանսպորտ: 47.Սիրիայի նախագահը: 49.Ցուցական դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ցեյտնոտ: 9.Անանեւ: 10.Հողմ: 11.Լիմոնադ: 13.Ամիգո: 16.Բավ: 17.Կեն: 19.Ջեռակ: 22.Ցնցուղ: 24.Տոլեդո: 25.Շոգի: 27.Թելատու: 29.Զավեշտ: 32.Գրետա: 33.Նիկոլո: 35.Սեյֆ: 38.Մով: 40.Գորկի: 41.Գլակ: 44.Էմին: 47.Ռիո: 48.Մուտի: 50.Ուտելի: 51.Զրո: 52.Եք: 53.Գեղ: 54.Կիա: 55.Ռելս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դելիք: 2.Մտքով: 3.Կոհակ: 4.Լամա: 5.Զատի: 6.Շեւրո: 8.Տոդես: 12.Մարց: 14.Մթել: 15.Գրադ: 18.Ցողոտ: 19.Ջոկատ: 20.Ռելե: 21.Կոլտ: 23.Ուշակով: 26.Գուգո: 28.Եֆիմ: 29.Ջեխ: 30.Վասո: 31.Շեյկ: 34.Կոմիտե: 36.Երկու: 37.Ֆինիքս: 39.Թաի: 42.Լռիկ: 43.Կոզա: 45.Մուգ: 46.Նեղ: 48.Մոռ: 49.Տել:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445